

ՇԵՐԻՔՆԱԶՈՐՄԱԿԱՆ

## ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ» ՊՈԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը հայոց միջնադարյան քնարերգության մեծագոյն ստեղծագործություններից է: Պոեմը մշտապես գտնվել է միջնադարագետների ուշադրության ոլորտում, բայց այն հիմնականում զնահատվել է պատմական հայեցակետից՝ բանաստեղծի կրոնամիստիկական հայացքների բացամամբ և, ընդհակառակը, աշխարհիկ տրամադրությունների ընդգծմամբ: Անշուշտ, ալդ միտումը ժամանակաշրջանի թեկադրանքն էր. գրականագետը ևս իր ապրած ժամանակի հասարակական գիտակցության ըմբռնումների և պատկերացումների կրողն է:

Իբրև ճշմարիտ երկ՝ «Ողբ Եդեսիոն ոչ միայն բավարարում էր ժամանակաշրջանի գրական և գեղագիտական պահանջմունքները, այլև ըստ ամենայնի արձագանքում էր հասարակական-քաղաքական, փիլիսոփայական և բարոյական խնդիրներին:

Տարակարծություններ չկան Ողբի պատմական հյութի և բովանդակության հարցում: Իր ուսումնասիրության մեջ Գ.ր. Հակոբյանը գրում է. «Սյուժեն ազատ է կրոնական բնությից և ընդգրկում է պատմական իրադարձություններ՝ կապված Եդեսիայի առման ու աղետի հետ»<sup>1</sup>: Վ. Չալոյանի դիտարկմամբ՝ «Ողբ Եդեսիոյ» պոեմը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ իր ձևով ընդհանուր ոչինչ չունի կրոնական-եկեղեցական պոեզիայի հետ»<sup>2</sup>: Մ. Արևելյանը նույնական ընդգծում է, որ «դրա հյութը ո՞չ կրոնական է և ո՞չ կրոնավորներին է վերաբերում, այլ աշխարհիկ է»<sup>3</sup>:

Խկապես, Ողբի հյութը աշխարհիկ է, և ուսումնասիրությունը, խորապես զնահատելով երկի գեղարվեստական արժանիքները, միանշանակ շեշտել են, որ քերթվածի գաղափարական հիմքը հայրենասիրությունն է, և այն ծրագրային ստեղծագործությունն է: Գ.ր. Հակոբյանը գրել է, որ «պոեմը դառնում է աշխարհիկ-քաղաքական մի քերթված, հայրենասիրական չափածո առաջին ողբերգությունը»<sup>4</sup>: Ըստ Պ. Խաչատրյանի՝ «Ողբն ստացել է պատմական ու հայրենասիրական լայն բովանդակություն, դրանք է ծրագրային բանաստեղծությունն»<sup>5</sup>: Վ. Նալբանդյանի կարծիքով՝ «Ողբը հայության ազգային ճակատագրի վերաբերյալ քերթողի խոնիքի բանաստեղծական ընդհանրացումն է, ծրագրային մի բանաստեղծություն, որտեղ իբրև փրկության միջոց առաջ է քաշվում ազգահավաքման, ազգի ցրված ուժերը միավորելու խնդիրը, բանաստեղծական խոսքի վիթխարի ուժով ներբռովում է ազատագրական կովի գաղափարը, շեշտվում հաղթանակի հավատն ու վճռակա-

<sup>1</sup> Գրիգոր Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 194:

<sup>2</sup> Վ. Կ. Չալոյան, Հայկական ուսմեսան, Երևան, 1964, էջ 183:

<sup>3</sup> Մանուկ Արևոյան, Երկեր, Բառ. Պ. Երևան, 1970, էջ 128:

<sup>4</sup> Գրիգոր Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 198:

<sup>5</sup> Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, աշխ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 14:

նույլումը»<sup>6</sup>: Սակայն բոլոր գնահատականներում անտեսվում երկրորդական պլան է միջվում Ողբի կրոնական եղակետը: Մինչդեռ կրոնական միտվածքը չի նվազեցնում քերթվածի արժեքը ու նշանակությունը, ավելին՝ հնարավորությունը է տալիս նորովի ներկայացնելու հոգևոր այն մթնոլորտը, որի մեջ ձևավորվել է Ծնորհալու աշխարհայացքը:

Ա. Մադոյանը Ողբը գրելու դրդապատճառ է համարում հայրենակիցներին միախարելը: Իր նկատառումը առ հիմնավորում է Ողբից քերպած օրինակներով<sup>7</sup>: Իրավացի է գրականագետը. Ծնորհալին քանից շեշտում է, որ Ողբը գրել է միախարելու և սփոփելու համար: Սակայն բանաստեղծն ունեցել է նաև այլ դրդապատճառ. քրիստոնեական չերմեռանությունը գնալով թուղանում էր, գոյսին էր բարձրացնում երկրայության ոգին: Դա չէր կարող չնոտահոգել բարեպաշտ քրիստոնյացին: Եվ պոեմի ստեղծագործական մտահացումը ծնվել է հոգևոր գաղափարների և աշխարհիկ տրամադրությունների փոխկապակցմամբ:

Միշագետքի հյուսիս-արևմուտքում գտնվող Եղեսիա քաղաքը Արևելքի քրիստոնեական աշխարհի նշանավոր կենտրոններից էր: 1098 թվականին՝ Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ, Բիշնվել էր Եղեսիայի կոմսությունը: XII դարում քաղաքը կառավարում էր ֆրանկ մի կուս։ Շուստին անունով: 1144 թ. Հալեպի Զանգի ամիրան հարձակվում է քաղաքի վրա: Բնակիչները մեկ ամիս շարունակ հետ են մղում թշնամու գրոհները: Նրանք օգնություն են սպասում դրսից, սակայն օգնություն չստանալով՝ հավատում են Զանգի ամիրայի երդմանը՝ չկոտորել բնակիչներին, և նեկտեմբերի 23-ին քաղաքը հանձնվում է թշնամուն: Զանգին դրժում է երդումը, ավերի, կողոպուտի և կոտորածի է մատնում քաղաքը, գերեվարում մարդկանց:

Գ. Զարպիանալյանը գրում է, որ եթե Եղեսիայի ավերման լուրը հասնում է Կիլիկիա, շատերի կարեկցությունն է շարժվում, և Ապիրատը, փափագելով թշնամու անգրության տիսուր հիշատակը կենդանի պահել «ապագայից մտքին ու սրտին», խնդրում է Ներսէսին, որ «իրեն բանաստեղծական աշխուժը բանեցընէ այս հիւթին վրայ: Անոր խնդրանացն արգամիքն է Եղեսիոյ Ողբը»<sup>8</sup>:

Իրոք, Ն. Ծնորհալին Ողբը գրել է իր եղբորորդու՝ Ապիրատի խնդրանքով: Այդ մասին նա տեղեկացնում է պոեմի հիշատակարանում.

... Զոր պահանջեաց տարփմամբ սիրոյ  
եղբօրորդին իմ ըստ մարմայ...<sup>9</sup>

Մ. Արենյանը ենթադրում է, որ պաշարման ժամանակ Ապիրատը եղել է Եղեսիայում և այստեղից ազատվելով՝ զնացել է Ծովը և պատմել քաղաքի ավերման մասին<sup>10</sup>: Հստ Լուս Տեր-Պետրոսյանի՝ այդ տեղեկությունը թյուրիմացության արդյունք է, և պատճառը

<sup>6</sup> «Ներսէս Ծնորհալի», Հոդվածների ժողովածու, էջ 21:

<sup>7</sup> Տե՛ս Ա. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Երևան, 1985, էջ 222:

<sup>8</sup> Գ. Զարպիանալյան, Պատմութիւն Բայերէն դպրութեամց, Վեմետիկ, 1865, էջ 517:

<sup>9</sup> Ներսէս Ծնորհալի, Ողբ Եղեսիոյ, աշխատասիրությամբ Մ. Մկրտչյանի, Եր., 1973, էջ 137:

<sup>10</sup> Տե՛ս Մանուկ Աքելյան, Երկեր, Բատ. Դ, էջ 129 (այսուհետև՝ «Ողբ Եղեսիոյ»):

Ծնորհալու հիշատակարանի մխալ վերծանությունն է, որը տրված է Ողբի թիֆլիսյան հրատարակության առաջարանում: Բացառելով Եղեսիայի գրավմանը Ապիրատի ականատես լինելու փաստը՝ հոդվածագիրն իրավացիորեն ավելացնում է. «Ավելի հավանական է ենթադրել, որ Ապիրատը պարզապես ծանոթ է Եղել Եղեսիայի առումը ողբակու գրական մի փորձի և բարի նախանձով մղված՝ խնդրել հորեղբորը, որ նա էլ մի քան հորինի»<sup>11</sup>:

XII դարի ասորական գրականության մեջ բանավեճ է ծագում երկրային աղետների գործում նախախնամության խաղացած դերի մասին: Հովհաննես Մերդինցի եպիսկոպոսն արտահայտում է այն տեսակետը, որ բոլոր աղետներն Աստծո կողմից չեն ուղարկվում: Եղբ գրավում է Եղեսիան, նա պետում է, որ քաղաքը կործանվեց ո՛չ Աստծո կամքով: Նրան հականառում են շատերը, այդ թվում՝ Դիոնիսիոս Բար-Սալիբին՝ հանդես գալով ճառերով, աշխատություններով:

Լ. Տեր-Պետրոսյանը ներկայացնում է բանավեճի մանրամասներն ըստ Միքայել Աստրու<sup>12</sup>: Ն. Տեր-Ներսիսյանը վկայակոչում է Սեմ-Մարտոնին, որը հաղորդում է, որ ասորի երկու եպիսկոպոսներ՝ Մար Դիոնիսիոս Բար-Սալիբի և Մար Բարսեղ, ըստ Ապով-Ֆարանցի վկայության, ողբեր են գրել Եղեսիայի գրավման առթիվ, բայց դրանք կորել են<sup>13</sup>:

Հայ Եկեղեցին սերտ հարաբերությունների մեջ է Եղել ասորական Եկեղեցու հետ: Երվանդ Տեր-Մինասյանցի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ դավանարանական հարցերի շուրջ վեճն ու կոիվը շարունակվում էին հոգևորականների միջև, և այդ վեճերին եռանդուն մասնակցություն է ունեցել Դիոնիսիոս Բար-Սալիբին, որը «երբեք առիթ չէ փախցրել հայերի սովորությունները պարսավելու և նրանց ամենածանր, ամեռույթատրելի խոսքերով նախատելու»<sup>14</sup>: Հակառակ այդ վիճաբանությունների՝ երկու Եկեղեցիների ներկայացուցիչներն էական հարցերում միաբան են եղել: Ծնորհալին ասորերներից թարգմանել է տվել տարբեր գործեր:

Աճճար է, որ Ծնորհալին տեղյակ չիներ վերը նշված բանավեճին: Լ. Տեր-Պետրոսյանը բացահայտում է Ծնորհալու Ողբի կապը ժամանակի ասորական գրականության հետ, նրանում բանավեճի արձագանքը:

Ծնորհալին Ողբում մի ամբողջ հատված է նվիրել այն խնդրին, թե արդոք միայն քրիստոնյաններն են մեղավոր, որ նրանք են պատժվում, կամ ինչո՞ւ պատժվողը հենց Եղեսիա քաղաքն է: Բերվող հատվածում Ծնորհալին հատակ է նշում, որ իր խոսքն ուղղված է նրանց, ովքեր իրավացի չեն համարում Աստծո դատաստանը.

<sup>11</sup> Տե՛ս «Ներսես Ծնորհալի», Հոդվածների ժողովածու, էջ 204-205, ծանոթագրություն 13:

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 205-210:

<sup>13</sup> Տե՛ս «Բազմավեպ», 1973, էջ 543:

<sup>14</sup> Երվանդ Տեր-Մինասյանը, Հայոց Եկեղեցու հարաբերությունները ասորվոց Եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 264:

Այլ զի ոմանք ընդդեմ բերին  
և աստանօր հակառակին,  
Ասեմ՝ զիա՞րդ իրաւացի  
այս է վճիռ դատաստանին...<sup>15</sup>

Իր դատումի մեջ ավելի աճաշառ է մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը՝ նշելով, որ Ծնորհալին աղեսոց ընդունում է իրուն աստվածային պատիժ մեռչերի համար՝ այդ հարցում նետնելով հին մեկնարաններին<sup>16</sup>: Նա համամիտ է Հակոբյանին, որ հատվածն իր արվեստով չի հյուսվում երկի կառուցվածքին, և ենթադրում է, որ Ծնորհալին այն նետն է ավելացրել, որովհետև այնտեղ ոչ թե բանաստեղծն է խոսում, այլ մեկնարանը<sup>17</sup>:

Այդ հատվածը, սակայն, Որի մտահղացման տրամաբանական ընթացքի մի օղակն է: Երկի մյուս էջերում ևս շեշտվում է, որ Աստծու պատվիրանները մոռանալու պատճառով է պատժվում քաղաքը:

Արդ, Ախմ՝ ասեմ զայն, որ կրեցի  
ի ձեռանէ: Տեառն զբարի,  
Ապա՝ զշարիսն, որ պատահեաց  
ինձ ըստ մեղաց հանկարծակի<sup>18</sup>:

Վերը հիշված հատվածում Ծնորհալին արձագանքում է Մերդինցու կողմից առաջ քաշված բանավեճին: Երբ Զանգին գրավում է Եղեսիան, շատերն են դժգոհում, թե Աստված ինչու է թողնում, որ անօրենները կոտորեն քրիստոնյաներին, իսկ Մերդինցին գրում է, որ եթե ֆրամակների գործը քաղաքում լիներ, Եղեսիան չէր ընկնի թուրքերի ձեռքը, ուրինման հրամանը Տիրոջից չէ: Մերդինցին Սուրբ Գրքից մեջբերումներով և բնական օրինակներով փորձում է ապացուցել իր տեսակետը: Ծնորհալին հակաճառում է Մերդինցուն և բոլոր երկրայողներին՝ պատճենով, որ Զանգին իմքնին ոչնչություն է, երկնակին թագավորն է տնօրինում կյանքը, նա պատժում է ոչ թե մեծ իշխանի և սիրելի բարեկամի ձեռքով, այլ «Բրամայէ անարժան մարդոյ վերջին և դառնագոյն դիմաց դահճին»<sup>19</sup>:

Աստված Զանգին պատժի միջոց է դարձրել ճիշտ այնպես, ինչպես պատժում է սաստիկ կարկուտ կամ Եղյամ բերելով, անչափ անձրնների կամ խիստ չոր երաշտի, մորեկսի բազմանալու կամ էլ արտերի մեջ զազրագույն մկների բազմանալու միջոցով:

Այն, որ հատվածն իր «սառնությամբ ու երկայնությամբ վճատում է երկի վայելչահյուս գեղեցկությանը»<sup>20</sup>, կարելի է բացատրել Օրանով, որ Ծնորհալին կարևորել է հատվածի գաղափարական նպատակադրումը. նետնելով Մերդինցում՝ բազմաթիվ օրինակներ է

<sup>15</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 102:

<sup>16</sup> Մամուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ, էջ 139:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>18</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 45, տես նաև էջ 53, 66:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>20</sup> Տես՝ Մամուկ Աբեղյան, Երկեր, Դ, էջ 140:

բերում Աստվածաշնչից և առօրյա կյանքից՝ ապացուցելու համար, որ Աստված է տնօրինում ամեն ինչ:

Ծնորհալին՝ Հակոբ Օշականի դիպուկ բնորոշմամբ՝ «յորովայնէ ընտրեալ եկեղեցականը»<sup>21</sup>, որ կրթվել ու դաստիարակվել է քրիստոնեական ոգով, չեր կարող կասկածի տակ առնել Աստծո իրավացիությունը: Խզուր չէ, որ Ծնորհալու վարքազիրը գրում է, որ «... եղբայրը գոհանում էր Տիրոջից, որ այդպիսի մեծ փարթամության տեր և հավատի այնքան մեծ սյուն տեսավ հաստատված սուրբ եկեղեցում իր ծնող Ըների որովայնից»<sup>22</sup>:

«Ողբ Եղեսիոյ» պոեմը գրելու մտահղացումը բխում էր աստվածաշնչյան դրույթների ճշմարտացիությունն ամրակայելու միտումից, իմարկե, միահյուսված այն մեծ ցավին ու կարեկցանքին, որ ապրում էր Ծնորհալին քրիստոնեական աշխարհին հասած ծանր աղետի, մարդկային զոհերի համար:

Երկի նախնրգանքն սկսվում է Եղեսիայի կոչով՝ ուղղված երկնային առաջաստի հարսներին՝ Եկեղեցիներին, աշխարհի ազգերին ու ցեղերին, Քրիստոսի հավատացյալներին ու նրա խաչին երկրպագողներին, որ գան ու ողբան իր հետ: Նախ և առաջ իր կանը նա ուղղում է նրանց, որ աստվածային բխումն են Աղենի աղբյուրների.

Որ էք բյուումն աստուածային  
ի յաղբերէն Աղենայի<sup>23</sup>:

Այդպես են բնորոշվում Ծնորհալու կողմից Երուսաղենմը, Հոռմը, Կոստանդնուպոլիսը, Ալեքսանդրիան, Անտիոքը, որովհետև նրանք եկեղեցական նվիրապետության կարևոր կենտրոններ էին.

Յորս առ ի ձենջ քառավտակ  
յորդահոսան գետք նոլովին՝  
Արբուցանել զտիեզերս  
աւետարեր բյումամբ բանի<sup>24</sup>:

Նախնրգանքի այս հատվածին Մ. Արենյանն անդրադարձել է մեկ-երկու տողով. «Եղեսիան... դիմում է քրիստոնեական նշանավոր կենտրոններին՝ բանաստեղծորեն բնորոշելով նրանց կատարած դերերը»<sup>25</sup>:

Հստ Էոթյան սա միայն բանաստեղծական բնորոշում չէ: Գործածելով Ավետարանից քաղված մակդիրներ ու բացատրություններ, Ծնորհալին փաստորեն արտահայտում է վարդապետական մտքեր: Եղեսիան նախ դիմում է Երուսաղենին. նա երկնավոր թագավորի մեծ քաղաք է, որովհետև այնտեղից են բնել Օրենքը և Մարգարեները, այնտեղից է

<sup>21</sup> Տե՛ս Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 399:

<sup>22</sup> «Հայկական վարքն և վկայարամություններ V-XVդդ.», Եր., 1998, էջ 80:

<sup>23</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 22:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>25</sup> Մանուկ Արենյան, Երկեր, Դ, էջ 129:

ծագել ամճարելի լուսը: Այնուհետև Եղեսիան դիմում է Հռոմին, որտեղ հաստատված է Պետրոս առաքյալի Աթոռը.

Եկեղեցիդ անշարժելի,  
ի Կեփայեան շինեալ վկիմ,  
Դրանց դժոխց անյաղյելի  
և կմիջ երկնիցն բացողի...<sup>26</sup>

Ծնորհալին ակնարկում է Պետրոս առաքյալին: Պետրոս հունարեն Աշանակում է՝ քար, վես: Եկեղեցական գրականության մեջ Պետրոս առաքյալին կոչում են Վեմ հավատու: Հռոմից հետո Եղեսիան ողբալու է հրավիրում Կոստանդնուպոլիսին՝ անվանելով ճրան «Երկրորդ Երրուսաղեմ» և նոր Հռոմ զարմանալի»<sup>27</sup>:

Եղեսիան դիմում է նաև Ալեքսանդրիային, որտեղ գրվել է Մարկոսի Ավետարանը, Անտիոքին, որ գրվել է Մատթեոսի Ավետարանը:

Հատվածի վարդապետական կողմին անդրադարձել է Ներսես Տեր-Ներսիսյանը<sup>28</sup>: Խորքային առումով տարրողութակ է հատվածը: Նախ՝ Ծնորհալին անուղղակի կերպով կարևորում է այդ քաղաքների նշանակությունը՝ իրեն քրիստոնեության տարածման կենտրոններ, ճրանց դերը հավատի զորացման գործում: Քրիստոնեության ամրապնդման համար կարևոր դեր է կատարել նաև Հայաստանյաց Եկեղեցին: Եվ Եղեսիան աշխարհի Ստորին կողմից իր հայացքն ուղղում է դեպի Արևելք, դեպի Մեծ Հայք, դեպի Հայոց Եկեղեցին.

Յորում կաթեաց շողն երկնային,  
զպաղն հալեաց զիհւսիսի...<sup>29</sup>

Եղեսիան ողբակցելու է կանչում նաև Աթին, որի անունն իսկ «Երրակի տառի թերի յԵրրորդութեանն խորիրդի»<sup>30</sup>:

Անմկատելի ու անորսալի՝ հյուսվածքի մեջ մուտք է գործում հայրենասիրության զգացումը, հայրենասիրության այն որակը, որը նուրբ է, բայց միևնույն ժամանակ զրոել, որով հետև շաղախված է Ավիշվածությամբ ու ազգի արժանապատվության զգացումով:

Քերթվածի նախերգանքում Եղեսիայի կողմից հիշատակված քաղաքներից շատերը արժանացել են նոյն ճակատագրին, ավերվել են նույն թշնամու կողմից:

Եղեսիան խնդում է Ալեքսանդրիային՝ ողբակից լինել իրեն.

<sup>26</sup> «Ողբ Եղեսիո», էջ 24:

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 25:

<sup>28</sup>Տե՛ս «Բազմնավեպ», 1953, էջ 237:

<sup>29</sup> «Ողբ Եղեսիո», էջ 31:

<sup>30</sup> Նոյն տեղում, էջ 37:

Զի հաւասար համգանակի  
յանօրինաց եղաք զերի<sup>31</sup>:

Ծնորհալին, սակայն, չի սահմանափակվում միայն ողբալով: Խորաթափանց մտածողը, պահի հայացքով վերլուծելով քաղաքական իրադրությունը, քրիստոնեության զորացումը դիտում է իբրև այլադպավանների դեմ մղվող պայքարի կարևոր միջոց, և ճրա երկը դառնում է քրիստոնյա աշխարհի, այդ թվում՝ հայերի փրկության ծրագիր:

Ծնորհալին առաջադրում է քրիստոնյա երկրների միասնության խնդիրը, հնչեցնում բողոքի ձայնը քրիստոնյա աշխարհի անտարբերության դեմ: Դիմելով Անտիոքի՛ Եղեսիան ասում է:

Խմ մերձավոր և անձկալի՝  
յուրախութեան ժամանակի:  
Ընդէ՞ր չհասեր վաղվաղակի  
ինձ ի թիկունս օգնականի,  
Այլ թոյլ եսուր վասն խեթի  
մատնիլ ի ձեռս անօրինի<sup>32</sup>:

Եթեն Անտիոքը շուտ հասներ օգնության, Եղեսիան չէր տապալվի և Ծնորհալին վրեժ-խընդրության կոչ է անում քրիստոնյա երկրներին.

Ձե՞նն մասոն վաղվաղակի  
ինձ՝ կապելոյս ի տաճ բանտի,  
Ա՞ն զվոէծս աններելի  
ի թշնամոյն զիս զերողի<sup>33</sup>.

«Ողբ Եղեսիոյ»-ի նախերգանքն իր մեջ խտացնում է երկի զաղափարական ու հուզական բովանդակությունը, որ բացվում, նորանոր շեշտեր է ստանում այուժեի զարգացման հետ: Վերստին ընդգծվում է մեղքի զաղափարը: Եղեսիան կործանվում է Տիրոջ գիտությամբ, որովհետև բոլորն էին ընկած մեղքի ախտում:

Ծնորհալին աղետի պատճառը տեսնում է մարդկանց մեղքերի մեջ, հավատացնում, որ միայն ապաշխարելով կարող են Տիրոջ բարկությունը մերմել: Բանաստեղծը քրիստոնեական վարդապետության ճշմարտությունների վրա է հենավում հոգու և մարմնավորի, դատաստանի և հատուցման հարցերում ևս: Սպացող Եղեսիան իր զոհված զավակներին միսիթարում է հարության հովսով: Նրանք լուսն պսակ են ստանալու Աստծոց՝ միանալով հրեշտակների դասին, քանի որ ճրանք նահատակվել են՝ քրիստոսի հավատը սրտերում

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>32</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 29:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 25:

ու հոգիներում: Նրանք մեղքի պարտքը կրկին առան, չարիքների տգեղ պատկերը նոծեցին.

Դուք ի ձեռաց Տեսան տանջեալք,  
զպարտիս մեղաց կրկին առիք,  
Չտգեղ պատկեր չարեացն եղծիք,  
զոր ի մարմնի աստ ումէիք<sup>34</sup>:

Ու թեև նրանք մեռան մարմնով, Աստծո մոտ պահված կյանք ունեն: Յուրաքանչյուր ոք  
ըստ իր արած գործերի է հաստուցվելու Ամեն Դատաստանի օրը, ուստի պեսոք է արդարու-  
թյան գործերը հավատի հետ զուգակցել.

Արդ, այս խրատ է մարդկային  
հանուրց բոլոր բարեպաշտին.  
Ոչ ի հաւատն ճշմարիտ  
ունել միայն Վստահութիւն,  
Այլ և զգործս արդարութեան  
միաբանել ընդ հաւատին.  
Քանզի մեռեալ հաւատոք ասին,  
որում և գործք ոչ հետևին...<sup>35</sup>

Ողբը համակված է նաև կենսազգացողությամբ ու կենսափրությամբ: Բանաստեղծը  
խալաղ ու երջանիկ կյանք է ցանկանում մարդկանց իրենց սեփական երկրում: Սակայն  
Ողբում առկա նոր աշխարհայնցողությունը, կրոնական ըմբռնումների, զաղափարների,  
գեղարվեստական ընկալման նոր մակարդակը խոր արմատներ ուներ: Դեռ 1121 թվակա-  
նին գրած «Վիպասանության» մեջ Ծնորհային արտահայտում է իր գեղարվեստական  
կողմնորոշումը՝ վկայելով, որ իրեն հուզող թեման պեսոք է լինի Հայրենիքը և Հայ Եկեղե-  
ցին:

Ծնորհային Ողբում հիշատակում է Վարդանանց: Սա խոր իմաստ ունի. Եղիշեն ընդ-  
գծել է քրիստոնեական հավատի վճռական նշանակությունը Հայաստանի և հայ ժողովը-  
դի հնքնուրունությունը պահպանելու խնդրում: Վարդանանց նվիրված իր «Նորահրաշ  
պահաւոր» շարականում Ծնորհային դրվատում է ոչ միայն այն վսեմ նպատակը, հանուն  
որի նահատակության լուսապակին արժանացան այդ նահատակները, այլև նրանց հայ-  
րենահրական ոգին և մարդկային կերպարը: «Ողբ Եղեսիոյ» քերթվածում ընդգծում է հո-  
գևորականների դերը ազատագրական կովի կազմակերպման գործում: Նրանք հորդորում  
են կովողներին.

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 103:

Մի՛ երկնշիլ ի սրոյ նորին,  
որ սպանանէ միայն զմարմին,  
Այլ յայնմանէ՝ զարհուրեսցուք,  
որ գնինմին տայ զերկոսին...<sup>36</sup>

Ծնորհալին գովերգում է հավատի նկատմամբ նրանց ունեցած անդավաճան նվիրվածությունը, նրանց մարդկային նկարագրի արիությունը:

Ակնհայտ է Ծնորհալու խրատաբարոյական միտումը, և իրավացի է Ա. Մադոյանը, որ Ծնորհալին «առաջադրում է երիտասարդության հոգեֆիզիկական համակողմանի, Աերդաշնակ զարգացման պահանջը»<sup>37</sup>: Ողբի հիշատակարանում դրվատվում է Ապիհատի՝ ոչ միայն զրի իմաստը լավ իմանալը, այլև զենքի արվեստում ներհմտացած լինելը:

Ներսես Ծնորհալու «Ողբ Եղեսիոյ» քերթվածը չի կորցրել իր արդիական նշանակությունը: Ալարպա ընթերցողին էլ գրավում են այդ երկու պատկերված ապրումները, մարդու նկատմամբ բանաստեղծի տածած սերն ու կարեկցանքը, հայրենի պետականության վերականգնման բուռն տենչանքը, շիկացած ատելությունը բոնատիրության նկատմամբ, բանաստեղծի իսկ բնորոշմամբ.

Սուրն անողորմ անօրինի,  
որ մեր արեամս է ի սովի,  
Որ չէ յագեալ և ոչ յագի՝  
մինչն ի գալ կատարածի<sup>38</sup>:

«Ողբ Եղեսիոյ» պոեմը հնչել է դարեր շարունակ՝ հայ ժողովրդի համար դառնալով սփոփանքի ու հուսի երգ, ուղենշելով մաքառելու ուղին:

<sup>36</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 64:

<sup>37</sup> Ա. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը, էջ 222:

<sup>38</sup> «Ողբ Եղեսիոյ», էջ 39: